

«... յամին 1814 Եկեալ իմ ի Ս. Պետերբուրգայ աստ ի Մոսկով՝ օգնականութեամբն Աստուծոյ, եւ բարեհաճութեամբ օրհնեալ ազգանամ Տէրութեանս՝ ձեռն արկի շինել զլայնանիստ հոյակապ Համալսարան³³. Եւ յետ ծախելոյ աւելի քան 200 հազար ուրբի ի սեփական գոյից իմոց՝ բաց յայնմ գումարէ, զոր ընկալայ յարքունական գանձանակէ (այն է գոտիոսիս բարդեալս ի բազում ամաց հետէ ի մայր գումարէ անդր մուծելոյ յինէն, ըստ զօրութեան կտակի գերագանց եղբոր իմոյ Աղայ Յովհաննէսի), հազիւ քէ հասուցի զայն յիւր աւարտ ի 1816, եւ ի սկզբան յետագայ ամի ժողովեցի զՀայկաձին մանկունս յամենայն շրջակայ նահանգաց, եւ սկիզբն կալայ ի ձեռն քաջակիրք զաստիարակաց վարժել զնոսա ի փառս մարդասիրին Աստուծոյ³⁴»:

Այս տողերից պարզ երեւում է, որ
 ա. ձեմարանի հիմքը դրուած է 1814 թ.:
 բ. Շէնքի կառուցումն աւարտուել է 1816 թ.:

գ. Առաջին ուսումն. տարին սկսուել է 1817 թ. յունուարին:

Այնուհետեւ Մսեր Մսերեանցը իր «Յիշատակարանի, Երրորդ մասում, գլուխ երկրորդում տալիս է Լազարեան ձեմարանի շինութեան պատմութիւնը, որը սկսում է այսպէս.

«Տեսրց Լազարեանց ձեմարանն Արեւելեան լեզուաց որ ի Մոսկուա կառուցեալ է յամի Տեառն 1815, ի ներգործական Պետական Խորհրդականէ եւ ի Հրամանատար Ասպետէ ի Յովհաննէ Լազարեան Լազարեանց, եւ յեղբորէ նորա ի Յովակիմայ Լազարեան Լազարեանց...»:

Այս տողերին Մ. Մսերեանցը կցել է հետեւեալ ծանօթութիւնը.

«Հիմնարկութիւն ձեմարանիս սկսեալ եւ վնարեալ յընթացս 1813 եւ 1814 ամաց, իսկ զասատուութիւնն ի նմա սկսեալ է յամի 1816 (տե՛ս ի Կարգադր. ձեմ. յէջ 12)³⁵»:

Այս տեղեկութիւններէց, որոնք հիմնուած են նոյնպէս պատմական արժէք ունեցող փաստաթղթի վրայ, հետեւում է, որ՝

³³ «Համալսարանի» անունը ի թղթի աստ եւեթ տեսանի բնծայեալ ձեմարանին Լազարեանց, եւ այն յայտ է թէ՛ ըստ կամս կարծեաց կամ ըստ ասանձին ինչ հաճոյից շարադրողի բանեցող: Մսեր Մսերեանց:
³⁴ Տե՛ս Մսեր Մսերեանց, «Յիշատակարան», էջ 57, Մասն Ա., ընդգծումները մերն են:
³⁵ Անդ, Մասն Գ., էջ 12:

ա. ձեմարանի հիմքը դրուած է 1813 թ.:
 բ. Շէնքի կառուցումը սկսուել է 1813 թ., շարունակուել եւ աւարտուել է 1814 թ.:

գ. Դասաւանդութիւնը սկսուած է 1816 թ. յունուարին:

Այս տուեալներն մէջ եւս խօսք չկայ 1815 թ. մասին:

Պրոֆ. Ալ. Չինովեւը ձեմարանի իր համառոտ պատմութեան 32րդ էջում գրում է.

«1814 թ. մայիս 10ին օրհնուեցին՝ գոյութիւն ունեցող նախկին տունը, տեղը եւ հիմնադրութիւնը նոր շէնքի...: Մի տարի անց, 12 մայիս 1815 թ. սկսուեց դասաւանդութիւնը ձեմարանը մտած աշակերտների համար, գլխաւոր հսկողութեամբ հիմնադրի եւ Հոգաբարձու Յովակիմ Լազարեանի»³⁶:

Այս տուեալներից հետեւում է, որ՝
 ա. ձեմարանի հիմքը դրուել է 1814 թ. մայիս 10ին:

բ. Մի տարի անց՝ 1815 թ. մայիսին սկսուել է առաջին ուսումն. տարին:

ձեմարանի պարտիզում Լազարեանների յիշատակին կառուցուած բուրգի վրայ եղած արձանագրութեան մէջ մատնանշուած է ձեմարանի հիմնադրութեան թուականը՝ Մայիս մէկ 1815 թ.³⁷:

Մ. Մսերեանցը յիշատակում է նաեւ Մոսկուայի մի ուսւ լրագրի վկայութիւնը, ուր ասուած է թէ՛

«Յամին 1814 թ. կանգնեցաւ ի մայրաքաղաքի մերում ուսումնարան նոր՝ ծախիւք երկուց եղբարց՝ Յովհաննու եւ Յովակիմայ Լազարեանց³⁸...»:

Պետերբուրգի «Ռուս. Ինվալիդ» կիսապաշտօնական թերթում 1825 թ. գրուած է եղել՝

«... Այսու եղանակաւ հիմնաւորեալ յամին 1816 Հայկական ձեմարանն Լազարեանց...»:

Վերջապէս կայ մի այլ պատմական փաստաթուղթ, ուր տեղեկութիւն կայ ձեմարանի հիմնադրման թուականի մասին: Այդ փաստաթուղթը մեր վերը յիշատակած խնդրագիրն է, որ Յովակիմ աղան եւ նրա երկու որդիքը՝ Յովհաննէան ու Պաշտուրը ներկայացրել էին կայսեր Ալէքսանդ Ա. ին 1824 թ.

³⁶ Տե՛ս Պրոֆ. Չինովեւ, էջ 86:
³⁷ Տե՛ս Մ. Մսերեանցի «Յիշատակարան», Մասն Գ, էջ 92:
³⁸ Անդ, էջ 94:

յունիս 19ին: Այդ խնդրագիրը սկսում է հետեւեալ բառերով.

«Ուրբամայ փորձը ապացուցեց մեր զարոյցի իրական օգտաւէտութիւնը» եւ այլն:

Եթէ ձեմարանում դասաւանդութիւնը սկսուել է 1815 թ. մայիս 12ին, ինչպէս վկայում է Պրոֆ. Չինովեւը, ապա 1824 թ. յունիս 19ին կը լինի ուղիղ 8 տարի. ուրեմն, ձեմարանի հիմնադրութեան թուականը համարում է 1815 թուականը:

Չանց ենք առնում Հայկական աղբիւրների (Երիցեան, Լէօ եւ այլն) տեղեկութիւնները:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնելու լինենք, որ ձեմարանի 50ամեակը կատարուել է 1865 թ. Պաշտուր աղա Լազարեանցի կենդանութեան օրօք, իսկ 75ամեակը՝ 1890 թ., այսինքն՝ միշտ ընդունուած են եղել 1815 թ. ձեմարանի հիմնադրութեան, թուած է, որ հէնց 1815 թ. տարի ընդունել եւ անխախտ պահպանել: Չխախտենք, ուրեմն, պատմական աւանդութիւնն ու շիտթ չատաջանենք մտքերի մէջ. ընդունենք ընդ միշտ 1815 թ., որպէս ձեմարանի հիմնադրութեան իսկական թուականը:

(Շարունակելի:)

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՀԵՑ ՄԾԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

10. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՇԿԱՐՏԱՅ ՅԱՐԻՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (1861)

Ընկերութիւնս յիշուած է Ա. Ալպոյաճեանի քով⁷⁶, առանց մանրամասնութեան: Հին յիշատակութեան մը չենք հանդիպած: Արքունի թշկական զարոյցը՝ Կալաթա Սա-Արքունի թշկական զարոյցը՝ Կալաթա Սա-Արքունի թշկական զարոյցը՝ Մուլթան Մահմուտ Բ. էն րայ՝ հիմնուած է Մուլթան Մահմուտ Բ. էն րայ՝ 1839 Մարտ 14ին, միայն մահմեդական տղոց համար: 1841ին սկիզբը Մուլթան Ազիզ թոյլ կու տայ որ «բայաներու» — Հայ, յոյն հրեայ — տղաք ալ կարենան մուտք ունենալ այդ վարժարանը⁷⁷: Հայ աշակերտներէն 3 հոգի — Ստեփան Ասլանեան, Նիկողայոս Արրիլոֆ եւ Գրիգոր Եանովիչեան — 1848ին արդէն

⁷⁶ Անդ, էջ 83:
⁷⁷ Արշ. Արար. 1840, թ. 8:

թշկական վկայութիւն կը ստանան⁷⁸: 1845էն սկսած Հայ թիշկներ ալ դասախօսած են հոն⁷⁹:

11. ԿՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Ընկերութեան Յանձնաժողովի Ատենապետ՝ Հ. Ս. Արաճաճեան՝ 1862 Ապրիլ 17ին Բերայէն ծանուցում մը կը հրատարակէ Մասիսի մէջ⁸⁰, որմէ կը տեղեկանանք Ընկերութեան գոյութեան մասին: Ծանուցումը կ'ըսէ. «Ենայողական Ընկերութեան կանոնադրութիւն մը խմբագրելոյ համար կազմուած Յանձնաժողովը կատարած ըլլալով իրեն եղած յանձնարարութիւնը, ընդհանուր ժողով կը հրաւիրէ յառաջիկայ Կիւրակէ՝ որ է Ապրիլ 22 ի ժամ 3՝ ի Նարեկեան վարժարան Բերայի — յայտնելով նաեւ որ ամեն փափաքողը ազատ են ներկայ գտնուել յիշեալ ընդհանուր ժողովոյն»:

12. ՊԱՆԱՊԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի պատասխարեալներու թշուառ վիճակը բարուքելու համար կազմուած Օգնական Ընկերութիւնը ունեցած էր անհամակիրներ ալ, որոնք տարբեր տեսակէտի եւ գաղափարի տէր ըլլալով՝ հարկ համարած էին կազմելու ուրիշ Ընկերութիւն մը, որ հսկէր Օգնական Ընկերութեան գործերուն վրայ: Այս երկրորդ Ընկերութիւնը կոչուեցաւ Պանապան Ընկերութիւն, որ սակայն առանց դրական գործ մ'արտադրելու՝ օգտակար եղողին ալ արգելք եղած էր գործելու:

Պահապան Ընկերութեան վերատեսչութիւնը 45 անգամ է կը բաղկանար, իննը թաղերէ հինգսկան հոգի ընտրուած ըլլալով⁸¹: Ընկերութեան գոյութիւնը տարի մ'իսկ չտեւած՝ լուծուած է⁸²:

13. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

1857 Մեղսեմբերին Արիտակէս Յովհաննէսեան եւ Գարրիէլ Երանեան «ազգիս երկու քաջահմուտ եւ բազմարդիւն երաժիշտները⁸³, կը հրատարակեն «Քնար Արեւելեան» երաժշտական ամսաթերթը, նուիրուած

⁷⁸ Անդ՝ 1848, թ. 317:
⁷⁹ Դոկտ. Վ. թորոմեան, անդ՝ էջ 581—582:
⁸⁰ 1862, թ. 532:
⁸¹ Պատմ. Ս. Փ. Հիւ., անդ՝ էջ 162:
⁸² Հմմտ. Մեղու., 1862, էջ 81—83: — Մասիս, 1862, թ. 531:
⁸³ Մասիս, 1857, թ. 297:

գուցեալ Իգնատիոս վարժապետի Պարչէլի անունով պանդոկին մէջ բացած պանդուխտներու գիշերային դպրոցին ուսուցիչի ամսականը, դպրոցին վարձքը, լոյսի եւ գրենական ծախքերը վճարելու, 2. անտէրունչ եւ աղքատ աշակերտներու հիւանդութեան պարագային բժշկական ծախքը հոգալու, 3. կարօտ աշակերտներու տարեկան նուէր մը, օրինակ՝ զգեստ, նուիրելու համար: Ընկերութեան կենդրոնատեղին էր Չուխուր կամ Թաուրապաշի ճատտէսի, թիւ 134³:

Ինչպէս կը տեսնուի՝ Ընկերութիւնը «Անձնուէր»ի սկզբունքն ունէր:

1867 Յուլիսին Պոլսոյ «Փունջ» (թ. 180) կը գրէ որ Ընկերութիւնը ութ ամիսէ ի վեր դադարած ըլլալով՝ Յուլիս 1էն սկսած է գործել Օդսէն Շահանեանի, Ստեփան Փափազեանի, Նշան Օտեանի, Սարգիս Պօշնագեանի եւ Մկրտիչ Էսմէրեանի զբաղման օգնութեամբ, որոնք խոստացեր են ամսէ ամիս մէկմէկ մէճիտ շնորհել:

18. ՆՈՐԱԿԱՉՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866)

Թատերական Ընկերութիւն մըն է Նորակազմ Ընկերութիւնը, որ կազմուած կերեւայ 1866ի առաջին ամիսներուն: Հիմնադիրներն են. Յ. Աճէմեան, Տիկ. Արուսեակ Պէգիբճեան, Տիկ. Ծաղիկեան, Սարգիս Մերթնանեան եւ ուրիշներ⁴: «Նորակազմ»ի թատերախումբը իր առաջին ներկայացումը կուտայ 1866 Մարտ 17ին, Նաուսի թատրոնին մէջ, ներկայացնելով «Յուզիթ եւ Հողփետնէս»⁵:

Ընկերութիւնը կը գործէ 1866—1868:

19. ՀԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866)

1866 Հոկտեմբերին ծրագրուած է հիմնել Հայկական Ընկերութիւնը, նպատակ ունենալով Բերայի մէջ գիշերօթիկ վարժարան մը բանալ: Ընկերութեան հիմնադիրները իրենց կողմէ «անժամանակեայ կերպի» Ընկերութեան Նախագահ կ'ընտրեն Դոկտ. Սերփիլէն, իսկ Գանձապահ՝ Գէորգ Պէյ Երամեան⁶: Ընկերութիւնը բաժանորդական ըլլալով՝ կը բաղկանար 30 բաժինէ, իւրաքանչիւրը՝ 50 թրքական լիրա, որով գումարը

³ Մասիս, 1865, թ. 706: — Մասիս Փոքր, 1865, թ. 27:
⁴ Ընդ. Տարեգ., 1927, էջ 182:
⁵ Մասիս, 1866, թ. 731:
⁶ Անդ. թ. 769:

պիտի ըլլար 1500 լիրա, որ պայման էր դպրոցի բացումին համար: Նոյեմբերի սկիզբը 8 բաժին գրուելէ վերջ՝ ա՛յլ ոչ ոք կը գրուի: Որով Ընկերութիւնը այն ինչ ծնած՝ մեռած էր:

20. ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866)

Ասիական Ընկերութիւնը «Արեւելեան դերասանական խմբին աւերակաց բեկորներուն վրայ բարձրացած»⁷ թատերական Ընկերութիւն մըն է, որուն խումբը արդէն 1866ի ձմեռուան շրջանէն կը սկսի իր ներկայացումներն⁸ եւ 1867—1869 մերթ Նաուսի եւ մերթ Օսմանիէ թատրոնի բեմին վրայ կը փայլի⁹:

21. ԼՈՒՍԱՒՈՐՁԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866)

Ընկերութիւնս հաստատուած կ'ըսուի Նախաձեռնութեամբ Երուսաղէմի միաբան Յակոբ Վ. Չիլինկիրեանի¹⁰, որ սակայն Ընկերութեան հիմնուելէն վերջն է որ խնդրած է անդամագրուիլ¹¹:

Ընկերութեան նպատակն եղած է Լուսաւորչական եկեղեցւոյ կարգուսարքին մէջ փոփոխութիւններ մտցնել եւ նկատուած է բողոքականամիտ եւ աղանդաւոր¹²: Իր կենդրոնը կը գտնուէր Բերայի մէկ անկիւնը¹³, իսկ Յակոբ Վ. 1867ին բանտարկուած էր Բ. Դուռը՝ իր մէկ պարաքին համար¹⁴:

Ընկերութիւնը 1868ին կը հրատարակէ 18 էջով «Յայաարարութիւն Լուսաւորչեան Ընկերութեան» անունով գրքոյկ մը¹⁵: Իսկ Գործադիր Ժողովի անդամները — Ա. Ա. եւ Մ. Ռ. Փ. — կ'իմացնեն թէ Չիլինկիրեան իրենց Ընկերութեանէն վտարուած է¹⁶:

22. ԿԱՄԱՒՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

Թատերական է Կամաւոր Ընկերութիւնը, հիմնուած 1869ին: Իր խումբին առաջին ներկայացումը տեղի ունեցած է 1869 Դեկտ. 29ին¹⁷: Անդամներէն կը յիշուին.

⁷ Մասիս, 1868, թ. 868:
⁸ Անդ. 1867, թ. 820:
⁹ Տէ'ս անդ. թ. 787, 789. 1868, թ. 833, 840. 1869, թ. 904:
¹⁰ Ա. Ալպոյաճեան, Գաղութ. Տարեգ. Բ., էջ 86:
¹¹ Մասիս, Փոքր, 1869, թ. 357:
¹² Մասիս, 1868, թ. 854:
¹³ Անդ. թ. 855:
¹⁴ Անդ. թ. 806:
¹⁵ Կ. Պ., 1868:
¹⁶ Մասիս, Փոքր, թ. 357:
¹⁷ Օրագիր, 1869, թ. 92:

Պ. Մաղաքեան, Գ. Լճեցի, Պ. Աղամեան, Չերաշի, Տիկ. Ա. Պէգիբճեան, իսկ խումբը «փոքր ու խոնարհ անուամբ կ'երեւի, բայց մեծ ու փառաւոր կը գործէ»¹⁸:

Գործած է գլխաւորաբար 1870ին¹⁹:

23. ԳՊՐՈՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Բերայի մէջ հաստատուած է²⁰ այն Դպրոցասիրաց Ընկերութիւնը, որ 1870 Մայիս 1ին Կալաթա Սարայ կայսերական Լիսէի հայ ուսանողներէն հիմնուած է²¹, Նախաձեռնութեամբ Կարապետ Սվաճեանի²²: Իր ձգտումն էր «հայարնակ վայրերու մէջ վարժարաններ հաստատել»²³: 1874ին Բանկալի մէջ գումարած ընդհանուր ժողովի մը մէջ փոփոխութեան կ'ենթարկէ իր կանոնները²⁴:

Մեզի կը թուի թէ այս Ընկերութեան սկզբնական նպատակը եղած է, Հանէսեանի ըսածին պէս²⁵, ճիւր-պալէս օգնել կարօտ դպրոցներու եւ կիրակօթեայ դասախօսութիւններ սարքել, իսկ 1874ին կանոններու փոփոխութիւններ ընելով՝ նպատակի ալ փոփոխութիւն տեղի ունեցած է, այսինքն՝ Արեւիլի վերը ըսածին պէս՝ գաւառներու մէջ վարժարաններ բանալ: Ըստ Ալպոյաճեանի²⁶ 1877ին «Արարատեան»ի օրինակին հետեւելով է որ Ընկերութիւնը կ'որոշէ Հայաստանի մէջ վարժարաններ բանալ, առաջին նախադրութեամբ բանալով Մուշի Լիճք գիւղի մէջ եւ յետոյ ալ Մուշի եւ Ալաշկերտի շրջաններուն մէջ՝ Մկրտիչ Սաւրեանի կրթական տեսչութեամբ:

«Դպրոցասիրաց»ը 1878ին Արեւելեան Ընկերութեան հետ միանալով կը կազմուի Դպրոցասիրաց-Արեւելեան Ընկերութիւնը²⁷:

24. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870?)

Բերայի Ուսումնասիրաց Ընկերութիւնը հաստատուած է Նախաձեռնութեամբ Միհրան Սվաճեանի²⁸, բայց հիմնումի տարին եւ մանրամասնութիւններ կը պակասն, թէեւ

¹⁸ Անդ. թ. 99:
¹⁹ Մամուլ, 1870, էջ 550, 559, Մասիս, 1870, թ. 956:
²⁰ Մարտ. Հանէսեան, անդ. էջ 115:
²¹ Մասիս, 1879, թ. 2431:
²² Հանէսեան, անդ. թ. 3853:
²³ Արեւիլի, թ. 1874, թ. 28:
²⁴ Անդ. էջ 135:
²⁵ Գաղ. Տարեգ. Բ., էջ 88:
²⁶ Մասիս, 1879, թ. 1431:
²⁷ Մարտ. Հանէսեան, անդ. էջ 135:
²⁸ Մարտ. Հանէսեան, անդ. էջ 135:

Հանէսեան անորոշ կերպով «70ական շրջանին» կ'ըսէ:

25. ՎԱՐԳՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1871)

Հայ կաթողիկէ երիտասարդներ 1871ի դարձան կը հիմնեն Վարդուհեան Ընկերութիւնը: Հիմնադրութեան «գործակից եղած է Տիւզեան մեծահամբաւ գերդաստանը իւր վաղածանօթ վեհանձնութեամբն ու ազգասիրութեամբը»²⁹: Ընկերութեան նպատակն եղած է Բերայի մէջ «ազգային օրիորդաց ցերեկօթիկ վարժարան մը ունենալ»³⁰: «...այնպիսի դպրոց մը... որոյ սկզբունքն եւ տալիք կրթութիւնը համեմատ ըլլան ազգիս արդի կացութեանը» (Մասիս, 1872, թ. 1265) 3:

Ընկերութեան առժամանակեայ Ատենապետն է Անտոն Ս. Պիւքմէճեան, իսկ Ատենադպիրը՝ Յարութիւն Ե. Պրոյեան: Կանոնադիրը Երկոտասանից ժողովէն վաւերացուելէ վերջ շատ անդամագրուող եղած է³¹: Դժբախտաբար չկրցանք ձեռք բերել Ընկերութեան կանոնադիրէն օրինակ մը, որ արձանագրութեանց տոմսակներու ետեւն անգամ գրուած է եղեր³²: Ամսական անդամավճարն է 5 դ. եւ մուտքի՝ 1 մէճիտ (Մասիս, թ. 1265):

1872ին Ընկերութիւնը ունէր 130 անդամ եւ բաւական խոշոր գումար մը³³: Իր գոյութիւնը պահած է մինչեւ 1880, բայց աղջկանց վարժարան մը բացած ըլլալու մասին արձանագրութեան մը չենք հանդիպիր: 1880 Դեկտ. 30ին Պոլսոյ Մասիս կը գրէ³⁴. «Կանխաւ եղած հրաւիրանաց վրայ, Կիրակի օրն (Դեկտ. 29) Համագրեաց Ընկերութեան վարժարանին մէջ վարդուհեան Ընկերութիւնը բնութեանը ժողով կազմեր ու սրտեր է՝ իւր գրաստանին Ազատասիրաց Ընկերութեան պարգիւն, ա՛յն պայմանաւ որ յիշեալ Ընկերութիւնը պաշտօնապէս յայտարարէ թէ իւր նպատակը միմիայն Հայ աղքատ աղջկանց դաստիարակութեան նպատակ է անխախտ կերպի»:
 Ազատասիրաց Ընկերութիւնը Հայ կաթ. Համայնքէն կազմուած է 1875ին: Ի նպատակ վարդուհեան Ընկերութեան արուելիք պարահանդէսի մը

²⁹ Մամուլ, Կ. Պ., 1871, էջ 339—340:
³⁰ Մեմ. Հավ., 1871, թ. 1080:
³¹ Անդ. թ. 948:
³² Անդ. թ. 1080:
³³ Անդ. թ. 1081:
³⁴ թ. 2785:

առթիւ Գ. Ապտուլասեան կ'ըսէ որ Ընկերութիւնը համազգային է եւ «Համազգայնաց»ի վերականգնումը: (Մասիս, 1873, թ. 1349):

26. ԵՐԱՆՈՅՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873)

Ընկերութիւնս յիշուած է Ա. Ալլոյսյանէնէն³⁵, որ կը գրէ. «Որպէս ընկերութիւն Ազգայեան Վարժարանի կազմուած է պաշտպանելու համար Փանոսեանը՝ Օգոսէն Սօճասարեանի յարձակումներուն դէմ եւ վարժարանին յարատեւութիւնը ապահովելու համար»: Ազգայեան աղջկանց վարժարանը Սամաթիոյ մէջ 1869 Յունուարին բացուած՝ յետոյ փոխադրուած էր Բերա, բայց չէ կրցած պահել իր դոյնութիւնը երկարատեւ: Հիմնադիրն էր Կարապետ Փանոսեան:

27. ՀԱՄԱԿԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

Ըստ Հանէսեանի³⁶ Ընկերութիւնս հիմնուած է 70ական թուականներուն Միհրան Քեարթիպեանի ձեռք: Պորոյ Օրագիրը կը ճշդէ թէ՛ ժամանակը եւ թէ՛ հիմնադիրը: Միհրան Ս. Քիթապեան եւ Մարտիրոս Յ. Տէօթէճեան 1874 Հոկտ. 24ին կը գրեն Օրագրին³⁷. «Տեսնելով որ Բերայի թաղին Հայ երիտասարդութիւնը չունենալով իրեն համար միութեան վայր մը, միշտ ցրուեալ լինելով... իւր կենաց ամէնէն թանկագին շրջանը... պարագ սեղը սպառելով... Ուստի ի նկատի ունենալով զայս ամէնը, խումբ մը անփորձ երիտասարդներ որոշեցինք ընկերութիւն մը կազմել եւ յաջողեցանք... Ընկերութիւն մը կազմեցինք Համակամ անուամբ, որու նպատակն է զիրքերու թանգարան մ'ունենալ, ուր պիտի գրանուին զանազան տեսակ գրքեր. վերջապէս երիտասարդութեան իրր վայր միութեան որոշեցինք Բերա, Թարլապաշի 42 թիւ դրոսարանը... Հայ երիտասարդութեան միտքն ու հոգին բարոյսապէս զարգացնող վայր մի... Համակամ Ընկերութեան պղծասէր անգամք փափաքած եւ միանգամայն որոշած են ամէն Կիրակէ... զաստիճանութեան պարպիլ, ուր պիտի ընդունին ուսման փափաք ունեցող ազգայինը, մանաւանդ պանդուխտ երբարք... Ընկերութեան հիմնադիրքն են,

³⁵ Պաղտ. Տարեգ. Բ., էջ 90.
³⁶ Մարտ. Հանէսեան, անդ՝ էջ 135.
³⁷ 1874, թ. 1375:

աչսինքն՝ 1874 Մարտ 31 է ի վեր անդամակցաց թիւը, որ 13 է, տակաւին 14 եղած չէ, արդարեւ ասի մեծ նախատինք մ'է Բերայոց...»:

Ընկերութիւնը 1875 Յունուար 5ին վիճակահանութիւն մը կը սարքէ, իսկ 1875 Փետր. 19ին ալ Ռ. Սէտէֆճեանի հեղինակած «Մեծն Վարդան Մամիկոնեան, փրկիչ Հայրենեաց» ողբերգութիւնը կը ներկայացուի Արեւելեան Թատրոնի մէջ՝ ի նպատակ «Համակամ»ի³⁸:

28. ՀՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

Մասիսի մէջ (1875, թ. 1692) արուած ծանուցումէ մը կ'իմանանք թէ 1874ի աշնան Բերայի մէջ հիմնուած է Հնասիրաց Ընկերութիւն մը՝ որուն անգամ գրուել ուղղը պէտք էր զիմել Ապտուլասեաններու Գործարանը: Ընկերութիւնը արդիւնաւոր չէ եղած (հմմտ. Մասիս, 1877, թ. 2066):

29. ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ԳԱՒԱՌԱՅ ԿԱՌՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ (1875)

Հիմնուած է Հայ Կաթողիկէ Հոգևոր Ժողովի կողմէ 1875 Յունուար 27ին՝ նպատակ ունենալով, ինչպէս անունէն յայտնի է, «գաւառաց պիտոյից զերութիւն մը մատուցանել»³⁹:

Ընկերութեան կենդրոնն էր Ղալաթիա, ամսական բաժնեկիւնը 1 դահեկան, իսկ վարչական մարմինը կ'ընտրէր Հոգևոր Ժողովը: Իր կանոնները, Կաթողիկոս-Պատրիարքէ հաստատուելէ վերջ՝ 1875ին կը հրատարակուին հայերէն եւ թուրքերէն:

Ուրիշ է «Ազգասիրական եւ Բարեպաշտական Ընկերութիւն Հայոց»ը, հիմնուած 1862ին, որուն հետ նոյնացուցած է Ալլոյսյանէն⁴⁰ 1875ի այս Ընկերութիւնը:

30. ԱՂԱՍԱՍԵՐ ՏԻԿԱՆՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1875)

Բերայի Ազգատաւէր Տիկնաց Ընկերութիւնը հիմնած են Հայ Կաթողիկէ «Վսեմաշուք Տիկնայք եւ Ենորհափայլ Օրիորդք ոմանք» 1875 Մարտ 1ին⁴¹: Իր նպատակն է, «միմիայն Ազգիս ազգատաց թշուառութեան օգնել... մանաւանդ աւելի հոգ տանիլ կա-

³⁸ Օրագիր, անդ՝ թ. 1402: — Մամուլ, 1875, էջ 326:
³⁹ Կանոնք Բարեպաշտական Ընկերութեան, Կ. Պ., 1875, էջ 3:
⁴⁰ Պաղ. Տարեգ. Բ., էջ 85:
⁴¹ Կանոնադրութիւնք, Կ. Պ., 1880, էջ 5:

րօտ աղջիկ տղայոց բարեկրթութան, ուսմանց եւ արուեստից, որպէս զի իրենք զիրենք ապրեցնելով օր աւուր աղքատութիւն ալ պակսի, որ է նպատակ եւ միմիայն վախճան Աղքատասէր Ընկերութեան»⁴²:

Ընկերութեան անունը պաշտօնական կնիքի վրայ նշանակուած է «Աղքատասէր Կանանց Ընկերութիւն», իսկ Ընկերութեան հրատարակութեանց մէջ զրուած է անգամ մը «Տիկնայց», անգամ մ'ալ «Տիկնանց»⁴³:

Ընկերութիւնը ունի Հիմնական (6) եւ վարչական (42) կանոններ: Անգամ կրնան գրուել միայն տիկիները եւ օրիորդներ, իսկ այրեր՝ միայն իրր պատուոյ անգամ կ'ընդունին (Յօդ. Ա.): Առաջին 20 անդամները, որոնք «հիմնադիրք» կը կոչուին՝ կ'ընտրեն Ընկերութեան Վարչական Մարմինը, որ կը բաղկանայ 9 անձէ եւ կ'ունենայ նախագահ, Փոխ-Նախագահ, Գանձապետ եւ Ատենադպիր (Յօդ. Բ—Դ):

Ընկերութիւնը ունի Ընդհանուր եւ Վարչական Ժողով, որոնցմէ առաջինին չեն կըրնար մասնակցել 21 տարեքը չըրացնողներ:

Ընկերութեան անգամավճարն է կէս մէծ իտիէ: Բաժանորդներէ հաւաքուած հասոյթին միայն մէկ չորրորդը կրնայ աղքատներու յատկացուել, մնացածը շահու կը արուի (Յօդ. 35):

Ընկերութիւնը մեծապէս նպաստած է Բանդալիթի Ս. Յակոբոյ Անկելանոցին: 1879ի Չատկի առթիւ Ընկերութիւնը Անկելանոցի կարօտ անձինքներուն կը նուիրէ 452 կտոր զանազան ձեւով կեղծէն (Մասիս, 1879, թ. 2294):

Ընկերութիւնը մինչեւ 1881 Փետր. ունեցած է 1200.76 թրք. լիրամուտք որմէ մաս մը գործածած է, իրր նպատակ, կարօտեալներու եւ «Համազգայն Օրիորդաց» վարժարանին⁴⁴: 1881ին հրատարակուած անգամուհիներու եւ պատուոյ անդամներու ցանկէն կը տեսնենք որ բազմաթիւ Հայ Կաթողիկէ անուանի Գերդաստաններ ալ անգամադրուած են Ընկերութեան⁴⁵:

Ինչպէս տեսնուի նախապէս՝ Վարդուհեան Ընկերութիւնը 1880ին իր գրամատ-

⁴² Անդ, էջ 14—15:
⁴³ Հմմտ. Ընկերութիւն Աղքատասէր Տիկնայց-Հաշուեկշիտ, Կ. Պ., 1881 եւ Կանոնադրութիւնք Աղքատասէր Ընկերութեան Տիկնայց, Կ. Պ., 1880:
⁴⁴ Տե՛ս Ընկերութիւն Աղքատասէր Տիկնայց-Հաշուեկշիտ, Կ. Պ., 1881:
⁴⁵ Անդ:

դուլը «Աղքատասիրաց»ին կը նուիրէ, պայմանաւ որ սա «Հայ աղքատ աղջկանց դաստիարակութեան» գործածէ այդ դրամը⁴⁶:

Թէ որքան ատեն կանգուն մնացած է այս օգտաշատ Ընկերութիւնը՝ մեզ անծանօթ է: Ամէն պարագայի՝ երկարատեւութեան ամէն երաշխիք կ'ընծայեն իր կանոններն ու գտած բացառիկ համակրանքը:

1911ին գործօն է տակաւին Ընկերութիւնս (Թէոդիկ, Ամէն. Տարեգ. 1911, էջ 407):

31. ՀԱՅ ԿԱՐԹԻՐ ԽՈՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1876)

«Հայ Կարմիր Խոյի Ընկերութեան» ծագումը կրնանք համարել 1876ի թուրք-սերպական պատերազմի առթիւ թրքահայ իւրաւորեալ զօրականաց դարձանին համար պէտք եղած նիւթերը պատրաստելու եւ նուիրելու նպատակաւ մասնաժողով մը կազմելու: Յիշեալ մարզապետական եւ հայրենասիրական մասնաժողովին անգամ գրուած են արդէն.

- Տիկին Նուբեան
- Տիկին Ստեփան փաշա
- Տիկին Ս. Ազրո
- Տիկին Ս. Աղաբեկեան
- Տիկնայք Մաքսուտ
- Տիկին Ք. Սանտալճի
- Տիկին Նորատուրեան
- Տիկին Ալլահօյէրտի
- Տիկին Թընկլըք
- Տիկին Չէնոբ էրմասեան
- Տիկին Սիւնայեան
- Տիկին Անտոն պէյ Մըսըրը
- Տիկին Եռասփեան
- Տիկին Ռ. Տէմիրճիպաշեան
- Տիկին Իլիսա Չափեան
- Տիկին Էտայեան
- Տիկին Խորասանճեան
- Տիկին Գաղապեան

⁴⁶ Մասիս, 1880, թ. 2785:

- Տիկին Մէրեմբուլի
- Տիկին Յ. Տալուտեան
- Տիկին Յ. Սազըզ
- Տիկին Կ. Շահպազ:

Լսածնուս նայելով, տէրութեան նախա-
բարաց ընտանիքներն ալ՝ լսելով հայ տիկ-
նանց այս հարկեմասիրական գործը, փափա-
քեր են իրենք ալ անդամակցիլ այն մասնա-
ժողովին: Նմանապէս կը լսենք թէ մեր
ազգէն ուրիշ բազմաթիւ տիկնայք ալ անդա-
մակցելու փափաք կը յայտենն: Մասնաժո-
ղովն այսօր կամ վաղը շրջաբերականաւ մը
պիտի յայտնէ իւր անդամոց՝ պատրաստուե-
լիք նիւթոց տեսակներն եւ յանձնուելու տե-
ղերը: Մասնաժողովն որոշած է հրատարա-
կել ազգային մէջ այն անդամոց անուն-
ներն՝ որք իրօք օժանդակեն այս մարդա-
սիրական գործին»⁴⁷:

Պոլսոյ Լոյս թերթն ալ «Մարդասիրա-
կան Ընկերութիւն Հայ Տիկնանց» վերնագրի
տակ արձագանգելով միեւնոյն լուրը՝ իր
կողմէ կ'աւելցնէ. «Հայ կանանց այս Հայրե-
նանուէր ու մարդասիրական ձեռնարկն մեծի
գոհունակութեան եւ շնորհակալեաց արժանի
է, որ մեծ պատիւ կը բերէ ընդհանուր Հայոց
ազգին: Նորա դարեւոր հաւատարմութեան
եւ անձնութեան նոր ազգացոյց մի ալ
տալով: Իցի՛ւ թէ Հայ կանայք այս կարգի
Հայրենեաց պաշտպանութեան եւ մարդասի-
րական գործոց մէջ իրենց վաստակն ու
ջանքն կրկնապատկեն եւ աշխարհի յայտնեն
թէ իրենք ալ Կատրամիտէի, Շուշանայ,
Տիգրանուհւոյ եւ այլոց Հայոց մեծաց Տիկ-
նանց սերունդն են»: Լոյս յետոյ յառաջ կը
բերէ Մասիսի տուած հայ տիկնաներու
ցանկը, աւելցնելով յաջորդներն ալ:

- Տիկին Վ. Վահան
- Տիկին Կոստան փաշա
- Տիկին Ռուսինեան
- Տիկին Սերվիչէն
- Տիկնայք Կիւմիւշկերտանեան⁴⁸:

Պոլսոյ Հայ տիկնանց այս նախաձեռնու-
թիւնը Իգմբրի մէջ հետեւողներ կ'ունենայ,
ուր 14 «Ազգ. երեւելի Հայ Տիկնայք», «Հար-

⁴⁷ Մասիս, 1876, թ. 1847, 1854: — Մէջազ-
գային Կարմիր Ուշի Ընկերութիւններու հիմնադրու-
թիւնը եղած է Փրնեի մէջ 1863—1864ին՝ նպատակ
ունենալով գլխաւորաբար պատերազմներու ժամանակ
վերականգնելու հոգածութիւնը:
⁴⁸ Լոյս, 1876, էջ 12:

ժեպի զեղեցիկ օրինակէ»՝ կը միանան նոյն
նպատակին մէջ⁴⁹:

Յատուկ խմատով «Հայ Կարմիր Խաչի
Ընկերութիւն» մը կազմուած է սակայն
1908ի սահմանադրութենէն յետոյ, Պոլսոյ
մէջ: Անոր կազմութեան ճիշդ ժամանակը
չենք զիտեր, բայց 1909ի սկիզբը արդէն
կազմուած էր: 1909 Սպրիլին «Կարմիր
Խաչի Ընկերութեան մեր խոհանարար քոյ-
րերուն» վերնագրով գրութիւն մ'ուղղելով
նոյն Ընկերութեան՝ Դոկտ. Ս. Թէրզեան կը
գրէ. «Ուրախութեամբ կարդացիմք ձեր կազ-
մակերպութիւնը: Լաւ գործ մ'ըրած էք ան-
միջապէս ձեր ծառայութիւնները Ազատու-
թեան Բանակին արամադրութեան ներքեւ
գնելով: Կը խնդրեմ որ ամբողջ Կիլիկիոյ
ներկայ աղիտալի կացութիւնն ուշադրու-
թեան առնելով, ձեր ծառայութեանց մէկ
մեծ մասն ալ նուիրէք տեղւոյն տառապեալ,
վերաւորեալ, անպատասխար ու մահամերձ
կերայներուն եւ քոյրերուն: Ասով ալ աւելի
արժեցուցած պիտի ըլլաք ձեր մարդասիրա-
կան ու ազգասիրական նուիրական պաշտօնը,
որուն ներկայիս մէջ այնչափ պէտք ունի մեր
տարաբախ Կիլիկիան»⁵⁰:

1915ի զարհուրանքէն վերջ՝ 1918 Նոյեմ-
բեր 26ին զարձեալ կը կազմուի Պոլսոյ մէջ
«Հայ Կարմիր Ուշ»ը, նպատակ ունենալով.
«Խնամել եւ դարմանել տարագիր, անօք եւ
որք հայ կիւմիւղները՝ Պոլիս եւ գաւառներու
մէջ, ընկեցիկներ դիտցնել, մայրանոցներու
մէջ հովանաւորել ծննդաբերութիւններ, ա-
պաստանարաններու եւ մանկանոցներու մէջ
պատասխարել ազատագրուած աղջիկներ եւ
տղաք»: Ունէր 5000 անդամ (Ամէն. Տարեց.
1921, էջ 299—300):

Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ
գիմարի շէնքին մէջ տեղի կ'ունենային Հայ
Կարմիր Ուշի ժողովները, 1918էն վերջ⁵¹:

32. ԿԱՐՕՏԵԼՈՅ ՕԺԱՆՈՒԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1877)

Հայութեան մէջ համերաշխ աշխատանքի
սիրուն օրինակ մըն է նաեւ Կարօտելոց

⁴⁹ Արշալոյս Արարատեան, 1876, թ. 1044:
⁵⁰ Բիւզանդիոն, 1909, թ. 3810: — Տես նաեւ
Հայ Բոյժ, Պարիս 1950, թ. 113, էջ 90:
⁵¹ Թորգոմեան, անդ. Բ., էջ 563: Ընկերու-
թիւնը Պոլսոյ եւ գաւառներու մէջ 40 մասնաճիւղեր
ունէր, որոնց Կենդրոնական վարչութիւնը կը կազ-
մէին. Ստեփան Գարսեան (Ատենայեան), Տիկ-
Մարի Սթամպուլեան (Բ. Ատենայեան), Տիկնանք
2. Գալիմբեարեան, Պ. Գուլումեան, Ա. Կիւմիւ-
ղեան եւ Բիշկինք Եղուց, Նազգաշեան, Շահ-
պազ, Բարսեղեան, եւ այլն (Տես Թէրզեան, Ամէն. Տ.
1921, էջ 300):

Օժանդակ Ընկերութիւնը, համազգային կազ-
մով Ընկերութիւն մը, որուն նպատակն է.
«Պոլսոյ մէջ դտնուած կարօտեալ ազգայնոց
օգնել՝ առանց կրօնի խտրութեան»⁵²:

Ընկերութիւնս հիմնուած է Բերա 1877
Մարտ 27ին: Հիմնադիրներն են համազգային
երիտասարդներ: Առաջին տարուան վար-
չական կազմն է հետեւեալը.

- Գ. Տ. Թէրզեան (Նախագահ, Բողոքական)
- Մ. Ս. Բիթապեան (Գրագիր Ժողովոյ,
Լուսաւորչական)
- Յ. Մ. Մազստեան (Պորհրդական, Կաթո-
ղիկէ⁵³):

Երկրորդ տարուան վարչական կազմը.

- Հ. Կ. Վ. Սիւլիլեան (Ատենայեան, Կաթո-
ղիկէ)
- Հ. Ա. Վ. Ռուբինեանց (Փոխ-Ատենայեան)
- Գ. Տ. Թէրզեան (Ատենայեան, Բողոքական)
- Յ. Մ. Մազստեան (Փոխ-Ատենայեան)
- Յ. Յ. Սիլիճեան (Գանձապահ)
- Մ. Ս. Բիթապեան (Փոխ-Գանձապահ,
Լուսաւորչական)
- Գ. Օտապաշեան (Համարակալ)
- Հ. Մ. Պէրպէրեան (Փոխ-Համարակալ)
- Ս. Յ. Սարաճ (Պորհրդական)
- Մ. Պ. Արապաճեան (Պորհրդական⁵⁴):

Անխտիր օժանդակութեան գեղեցիկ օրի-
նակ մը ներկայացուցած է Ընկերութիւնը
Մասիսի մէջ (1877, Թ. 2014):

33. ԴՊՐՈՑԱՍԻՐԱՅ-ԱՐԵՆԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(1878)

«Դպրոցասիրաց» եւ «Արեւելեան» Ընկե-
րութիւնները իրարու հետ միացած են 1878
Յունուար 1ին՝ կազմելով միացեալ Դպրո-
ցասիրաց-Արեւելեան Ընկերութիւնը, որ
իրեն գործի ասպարէզ ունեցած է սա-
Հայաստանի մէջ ազգային կրթութեան նպաս-
տել⁵⁵. յատկապէս աշխատելով Մշոյ գա-
ւառին մէջ (Մասիս, 1879, Թ. 2232): Ունի
ւտի մէջ 41 Յօդուածէ կազմուած Կանոնադիր մը:
Անդամավճարն է ամսական 1 դահեկան:
Սովորական վարչական Մարմիններէ զատ՝
Մասնախումբ մը, որ կը բաղկանայ երեք
անդամէ:

⁵² Կանոնադիր, Կ. Պ. 1878, էջ 4:
⁵³ Յայտագիր Կարօտելոց Օժանդակ Ընկերու-
թեան, Կ. Պ. 1877, էջ 2:
⁵⁴ Կանոնադիր Կար. Օժ. Ընկ. Կ. Պ. 1878, էջ 6:
⁵⁵ Կանոնադիր, Կ. Պ. 1879, էջ 3: — Մասիս,
1878, Թ. 2077, 2082:

Ընկերութեան ազգասիրական ծրագիրը
մեծ խանդավառութիւն ստեղծելով Հայու-
թեան մէջ՝ առաջին տարին արդէն 335 նոր
անդամ կ'ունենայ. մասնաճիւղեր կը հաս-
տատէ Տրապիզոն, Ռոտոսթօ եւ Մանչեստր.
նուիրատուութիւններ կ'ըլլան զանազան տե-
ղերէ⁵⁶:

Ընկերութիւնը 1878 Նոյ. 6ին Մուշի
Ս. Մարիանէ թաղին մէջ կը բանայ առաջին
վարժարանը, անօրէնութեամբ պոլսեցի Փի-
լիպոս Երէցեանի⁵⁷: Մինչեւ 1879 Հոկտ.
լիպոս Երէցեանը կ'ունենայ Մուշի, Բաղէշի եւ
վարչարչակերտի (Ալաշկերտ) մէջ մէկմէկ
վարժարան, իսկ Մուշի մէջ նաեւ Ընթեր-
ցարան մը⁵⁸:

Ընկերութեան նիւթական միջոցներն ա-
ւելցնելու համար 1879 Յունուար 24ին կը
տրուի պարահանդէս մը. վասուլբական Ըն-
կերութիւնը 50 Բերական, Ռոտոսթոյի
ճիւղը 10 ոսկի մէճիւր կը նուիրէ⁵⁹:

Դպրոցասիրաց - Արեւելեան Ընկերու-
թիւնը, ըստ 1880 Ապրիլ 19ի կայացած հա-
մաձայնութեան, կը միանայ Արարատեան եւ
Կիլիկիան Ընկերութիւններու հետ՝ կազմե-
լով «Միացեալ Ընկերութիւնը Հայոց»ը:
Դպրոցասիրաց - Արեւելեան Ընկերութեան
Կենդրոնական Ժողովի Դիւանը պաշտօնա-
կան Յայտարարութեամբ 1880 Յունուար 3ին
կը ծանուցանէ թէ «Իւր գործընթացն շարու-
նակող ճանչնալով Միացեալ Ընկերութիւնը
Հայոցը՝ կը դադրի գոյութիւն ունենալէ»⁶⁰:

34. ԵՆԱՄԱՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Հիմնուած է Բերա, 1879 Սեպտեմբեր
1ին: Իր նպատակն է. «Պոլսոյ մէջ իւր ա-
նուամբ արական սեռի վարժարան մը բա-
նալ»⁶¹:

«Ոնամատար»ի Կանոնադիրը ունի 33
Յօդուած: Ընկերութեան անդամ կրնայ ըլ-
լալ ամէն հայ, որ կը վճարէ ամսական 2 դա-
հեկան եւ իրաւունք ունի մասնակցելու Ընդ-
հանուր Ժողովի: Գործադիր Ժողովը կը
բաղկանայ 12 անդամէ:

⁵⁶ Դպրոցասիրաց-Արեւելեան Ընկերութիւն, Տե-
ղեկագիր, Կ. Պ. 1879, էջ 4—5, 26—28:
⁵⁷ Անդ. էջ 9: — Հիմն. Մասիս, 1878, Թ. 2190:
⁵⁸ Մասիս, 1879, Թ. 2431, 2457, 2482, 2484,
2499: — Արեւ. Մամուլ, 1879, էջ 157:
⁵⁹ Փոլսը, 1879, Թ. 1345, 1350:
⁶⁰ Արեւելեան Մամուլ, 1880, էջ 210—211:
⁶¹ Կանոնադիր Ոնամատար Ընկերութեան, Կ. Պ.
1879, էջ 3:

Ընկերութեան մասին անդրադոյն տեղեկութիւն չունինք: Ան անձանօթ է Ալլաօյաճեանի:

35. ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1880)

1880 Յունուար 1ին հաստատուած է Հայ կրթական Միութիւնը, որ իրեն նպատակ ունեցած է. «Ա. Բերայի ազգային երկսեռ վարժարանաց յարատեւ յառաջդիմութեան հոգ տանել. Բ. Աղքատ բայց ջանասէր եւ զգաստ ուսանողաց յատուկ պաշտպանութիւն ընել. Գ. Կիրակնօրեայ եւ զիշերային դասախօսութիւններ ընել տալ. Դ. Ժողովրդային գրադարան մը հաստատել. Ե. Բերայի ազգային երկսեռ վարժարանաց հոգաբարձութիւնն ստանձնել... անակնկալ պարագայի մէջ. Զ. Բերայի մէջ ընտելարանաց յաւերժան եւ բարձրագոյն ուսումնարանի մը հաստատութեան աշխատել»⁶²:

Ընկերութիւնը թէեւ ունեցած էր իր անհամակիրները՝ սակայն տարին չլրացած՝ կ'ունենայ 230 անդամ. կը նպաստէ թաղին վարժարաններուն⁶³:

Իր Կանոնագիրը, որ ունի Ա.—Զ + 35 Յօդուած՝ հրատարակած է Հանէսեան⁶⁴:

1881ին Ընկերութեան Տնօրէն Խորհուրդի Ատենապետն է Տ. Մ. Էքէրճեան, իսկ Ատենադպիրը՝ Մարտիրոս Տէօքմէճեան: 1880ին Ատենապետն էր Խաչիկ Պիւլպուլեան⁶⁵:

36. ԹՈՐԳՈՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1881)

«Բերայի արուեստասէր հոյ երիտասարդութիւնը նկատելով որ ազգային Ընկերութեանց մեծագոյն մասը աւելի կրթական քան թէ արուեստական նպատակի կը նուիրեն իրենց ջանքերը, մինչդեռ արուեստական ճիւղին զարգացման կարեւորութիւնն ալ՝ մանաւանդ գաւառարնակ ազգայնոց համար» այնքան յայտնի է՝ ուստի Բերայի մէջ 1881 Յունիս 1ին կը կազմէ Թորգոմեան Ընկերութիւնը՝ «Հայաստանի մէջ արուեստակալ (արուեստի) նիւղը մշակելու նպատակաւ»⁶⁶:

Ընկերութեան կենդրոնատեղին է Բերայի Նարեկեան վարժարանը. անդամա-

⁶² Մարտ. Հանէսեան, Հարիւր քսանհինգամեայ Յօդուածն. անդ՝ էջ 154:
⁶³ Մասիս, 1881, թ. 2866:
⁶⁴ Անդ, էջ 154—159:
⁶⁵ Գաղութ. Տարեգ. 1941, էջ 120:
⁶⁶ Մասիս, 1882, թ. 3145: — Ընկերութեան Կանոնագրի ճակատը գրուած է. «Նպատակ՝ Արուեստարան մը հաստատել ի Հայաստան»:

վճարը՝ ամսական 1 դահեկան. օրիորդներ, տիկիներ եւ օտարազգիներ միայն պատուոյ անդամ կրնան ըլլալ: 1882 Մարտին Ընկերութիւնը ունէր 200 անդամ. իր Գործադիր Ժողովի Ատենապետն էր Լեւոն Ս. Ասլանեան, իսկ Ատենադպիրը՝ Միհրան Տամատեան⁶⁷:

Ընկերութեան Կանոնները 34 Յօդուածէ բաղկացած են, հրատարակուած 1881ին⁶⁸:

37. ՅԱՌԱՋԳԻՄԱՍԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1881)

1881 Դեկտեմբերին Համազգեաց Ընկերութիւնը իր բացած Հայ Կաթողիկէ «Օրիորդաց վարժարան»-ի խնամակալութիւնը կը յանձնէ «Ազնուուհի Տիկնանց Յառաջդիմասէր Ընկերութեան»⁶⁹: 1882ի Յունիսին նոյն Օրիորդաց վարժարանի ամսվերջի քննութեանց ներկայ եղող մը կը գրէ. «Արդարեւ յոյժ գովելի է տեսնել տիկնանց համեստ եւ աղքատ Ընկերութիւն մը, ընկերակցութեան զազախարին ճշմարիտ նշանակութիւնը հասկնալով, ուրիշ իրեն նման, դաստիարակութեան նպատակաւ հաստատուած եղբայր Ընկերութեան մը, այն է Համազգեաց Ընկերութեան հետ միանալով, հոյ անուն կրող աղջկանց դաստիարակութեանց ամենակարեւոր գործովը կը զբաղի... սանուհեաց կարն ժամանակի մէջ ըրած յառաջադիմութիւնը տեսնելով, պարտ անձին կը համարեմք մեր խորին շնորհակալիքը յայտնել այն հաստատութեան մեծագոյնը... վարժարան Յառաջադիմասէր Ընկերութեան Տիկնանց այս փոքրիկ խմբակին փութալու հսկողութեանը կը պարտաւորի իւր վարժապետաց եւ վարժուհեաց գերազանց ընտրութիւնը»⁷⁰:

Հաւանական կը թուի որ Հայ Կաթողիկէ Տիկնանց կազմած այս Ընկերութիւնը հիմնուած ըլլայ 1881ին: Իր մասին ուրիշ կողմէ տեղեկութիւն մը չունինք: Ալլաօյաճեանի անձանօթ է անունն:

Ընկերութիւնը 1882էն վերջ ալ, գոնէ 1882—1883ի գալոցաշրջանին, շարունակած է իր դաստիարակչական աշխատանքները⁷¹:

⁶⁷ Մասիս, անդ:
⁶⁸ Տե՛ս Կանոնագրութիւն Թորգոմեան Ընկերութեան. Կ. Պ. 1881:
⁶⁹ Մասիս, 1881, թ. 3068:
⁷⁰ Մասիս, 1882, թ. 3240:
⁷¹ Անդ՝ թ. 3267:

38. ՆԵՐՍԻՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1881)

Ստեփանոս Պետրոս Ժ. Ազարեան Կաթողիկոս հիմնած է Ներսիսեան Ընկերութիւնը 1881 Յունիս 23ին, կազմելով անոր Կանոնագիրն ալ, որ կը բաղկանայ 34 Յօդուածէ, հրատարակուած 1881ին: Ընկերութեան նպատակը. «Հայ Կաթողիկէաց Հասարակութեան զարոցաց նպատակով՝ նոցա վիճակը բարւոքել եւ հարկ եղած տեղերը նոր զարոցներ կամ վարժարաններ հաստատել»⁷²:

Անդամ կրնայ զրուել ամէն անձ, որ ամսական 1 արծաթ դահեկան կը վճարէ: Ընկերութեան կենդրոնն է Բերայի Կաթողիկոսարանը, իսկ Տնօրէն Ժողովի Նախագահը՝ Կաթողիկոսը, ունենալով Ատենադպիր, Համարակալ եւ Գանձապետ:

39. ԳԹԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1881)

Ընկերութեան յիշատակութեան առաջին անգամ 1881 Յունիս 24ին կը հանդիպինք: Մասիս (1881, թ. 2949) կը գրէ որ Հայ Կաթողիկէները Բերայի Կաթողիկոսարանի մէջ Կաթողիկոս-Պատրիարքի Նախագահութեամբ Ժողովք մ'ընելով՝ Կաթողիկոսը երեք կէտեր կ'առաջարկէ, որոնցմէ երրորդն է. «աղքատաց օգնութեան համար Բերայի մէջ կազմելու Գթասէր Ընկերութեան գործողութիւնը մայրաքաղաքիս բոլոր թաղերուն մէջ ծառայել»:

Ինչպէս կը տեսնուի՝ աղքատախնամ Ընկերութիւն մըն է: Թերեւս նոյն 1875ի «Աղքատասէր Տիկնանց Ընկերութեան» հետ: Այս մասին չկայ որեւէ ակնարկութիւն:

Ընկերութիւնն 1881էն սկսած քանի մը տարի արդիւնաւոր գործունէութիւնէ վերջուածուած է: 1891 Դեկտեմբերին կը վերակազմուի դարձեալ. Ընկերութեան ննջեալ անդամներու համար պատարագ կը մատուցուի. Յանձնախումբ մը կը կազմուի, գրանի մը նոր կանոններ կը գծէ Ընկերութեան յառաջդիմութեան համար, որոնցմէ յիշենք մէկ երկուքը. Տարին մէկ անգամ, Փետրուարին, Ժողովք կազմել եւ հաշուեփետրուարին, Ժողովք կազմել եւ հաշուեփետրուարին ընել. Անարատ Յղութեան տօնին Չայնաւոր Պատարագ մատուցանել տալ հանդուրդ անդամներու համար, եւ այլն:

Ահա Յանձնաժողովի անդամներու անունները.

⁷² Կանոնագրութիւն Ներսիսեան Ընկերութեան, Կ. Պ. 1881, էջ 1, Յօդ. 1: — Հմմտ. Մասիս, 1881, թ. 2949:

Տիկին Տիրուհի Մըսրէլեան (Նախագահ)
Տիկին Նեկտար Տիւզ (Փոխ-Նախագահ)
Տիկին Թէրէզա Գուլուսեան (անդամ)
Տիկին Սրբուհի Ազարեան (անդամ)
Տիկին Թագուհի Մըսրէլեան (անդամ)
Տիկին Մարի Հաճիպիեան (անդամ)
Տիկին Լուչիա Ծէրպէթեան (անդամ)
Տիկին Մարի Գասապեան (անդամ)
Տիկին Գաթինա Գոլլարօ (անդամ)
Տիկին Մարիոնա Ազարեան (Գանձապետ)
Տիկին Տիրուհի Հանրմեան (Ատենադպիր)
Տիկին Գաթինա Եագոթեան (Փոխ-Ատենադպիր)
Տիկին Երանիկ Թորոզ, անդամ (Մէմբ. Այս. 1891, թ. 2252, 2257):

Յովհաննէս Յ. Ալան ուրախութիւն յայտնելով Գթասէր Տիկնանց Ընկերութեան վերակազմութեան առթիւ՝ կ'ըսէ. «Մինչդեռ Յոյնք եւ այլք ունին իրենց կանանց Ընկերութիւնները, մենք ինչո՞ւ չունենանք մերը: Ինչո՞ւ մեր տիկիներն ու օրիորդները անգործ նստին. միթէ մենք ալ պիտի չունենայինք մեր Գպրոցասէր եւ Հայուհեաց Ընկերութիւնները. արդեօք առ մեզ չկա՞ն որք եւ աղքատ աղջկունք... Գթասէր Տիկնայց եւ աղքատ աղջկունք, նոյնչափ ալ ամէնուն սէրն ու համակրանքը, նոյնչափ ալ սե՛ծ են այն գործերը, զորս կ'ակնկալենք այս Ընկերութեանէն: Ժամն է որ մեր կանայք եւս ստանձնեն գործունէաց գեր մը մեր հասարական գործոց մէջ եւ աղջկանց դաստիարական գործոց մէջ եւ աղջկանց դաստիարակութեան կարեւորութիւնն ի միտ առնելով ձեռն ի գործ արկեալ սկսին գործել...» (Մէմբ. Այս., 1892, թ. 2300):

Ընկերութիւնը բաւական մեծ գումար մը հաւաքելէ վերջ՝ մաս մը սյրի եւ որք տիկնանց, մաս մը աղքատ աղջկանց կրթութեան եւ մաս մ'ալ գաւառի վարժարաններուն օժանդակելու կը գործածեն, իսկ եթէ միջոցներ ներքն՝ մտադիր են նաեւ արհեստանոց եւ որբանոց բանալ (Անդ՝ թ. 2340):

1892ի շրջանին Ընկերութեան ջանքերով Խարբերդի վիճակին մէջ կը բացուի աղջկանց վարժարան մը՝ ուսուցչութեամբ Անարատ Յղութեան Հայ Մայրապետներու (Մէմբ. Այս., թ. 2518):

Պոլսոյ Հայրենիք (1892, թ. 157) 1892 փետրուարին խօսելով Ընկերութեան վրայ՝ ըսելէ յետոյ թէ ան «մէկ երկու տարիէ ի վեր կազմուած է» (անշուշտ վերակազմուած

